ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1
№ԳՀԱՊՁԲ-20-21/2-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

01 . 10 .2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ Գնորդ, մի կողմից, և ԱՁ Կարինե Գաբրիելյանը, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 07.07.2020թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-20-21/2-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնագրի №1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 6 587 000 (վեց միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | ԱՁ Կարինե Գաբրիելյան |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Գյումրի, Անկախության հրապարակ 9 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ա. 2-րդ հարկ 209 սենյակ |
| Հ/Հ 900011024537 | «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/6 |
| ՀՎՀՀ 02522157 | Հ/Հ 2050132048001002 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | ՀՎՀՀ 57288856 |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-21/2-2 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Միավորի գինը ՀՀ դրամ | Ընդհանուր գումարը ՀՀ դրամ | Ապրանքների մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝ 4 րդ, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ. |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համակարգիչ ամբողջը մեկում (Աշխատանքային կայան) | հատ | 2 | 3293500 | 6587000 | 2 |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-21/2-2 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 20.12.2020թ. ընդ որում՝ |
|---|---|---|---|
| չ/հ | անվանումը | CPV կոդը | 4-րդ |
| 1 | Համակարգիչ ամբողջը մեկում (Աշխատանքային կայան) | 30211280/502 | 6587000 |

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

ՎԱՃԱՌՈՂ
ԱՁ Կարինե Գաբրիելյան

Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ